ԱՐԱՐԱՏ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 122

22 ՆՈՅԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դրկ. արծ. վեցամսեայ՝ 20.— Մէկ թիւ՝ 1 դրկ.։—Արտասահման՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են։

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4. Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK
Péra, 5 Rue Baïram 5
Constantinople

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը։ 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո և է յօդուած։ 3.— Կեղծանունով դրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին։ 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր։ 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն։ 6.— Ծանուցմանց համար մանաւոր պայմանագրութիւնք կը կատարուին։ 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին դրկել։

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5։ Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար։ Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-ատրէսներ, մահագրներ, եւն., եւն.։ Գիները անմրցելի կերպով աժան են։ Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կողմանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան։

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի ✠ 22 Նոյեմբեր 1913 ✠ Թիւ 122

«Սրբազան Բանանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ **Կաթողիկէ Արձագանգ** շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւանանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն ուրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէր Վալի, առ. Ամեն. Տ. Պողոս Պետրոս ԺԴ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուանամարաւ:

ԴԷՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ա.

Ի՞ՆՉ Է ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

(Շար.)

Անուղղակի կերպով ես ձեզ մատնանիշ ըրի ազատութեան թշնամիները, որոնց դէմ կռուած է Աստուծոյ ճշմարիտ Եկեղեցին, այն Եկեղեցին որ ամենէն աւելի ամբաստանուած է իբր թշնամի ազատութեան. պատմութիւնը կեցած է հոն, և, եթէ հարկ ըլլայ այս նիւթին վրայ կը խօսինք ուրիշ առթիւ։

«Ազատութեան այս վարդապետութիւնը՝ ինչպէս մարդկային հոգւոյ անհիւրականութեան եւ անմահութեան ճշմարտութիւնը, ո՛չ ոք այնքան բարձրաձայն եւ աւելի յարատեւութեամբ հաստատած է, որքան Կաթողիկէ Եկեղեցին, որ ամէն ժամանակ զայն սորվեցուցած ու պաշտպանած է իբրեւ իւր հաւատալեաց մէկ յօդուածը: Մանաւանդ հերետիկոսներու եւ նորելուկ գաղափարներու ջատագովաց դէմ Եկեղեցին ինքն է որ իւր պաշտպանութեան տակ առած է զազատութիւնը, եւ մարդուս այս մեծ գանձը աւերակաց տակէն փրկած է: Այս մասին պատմութեան յիշատակարանները կեցած են վկայ այն արիութեան, որով նա (*Եկեղեցին*) Մանիքեցւոց եւ ուրիշներու նակառակ հիգերն ընկնած յաղթահարած է, եւ յեսին ժամանակաց մէջ Տրիտենդեան Ժողովոյ ատեն եւ յետոյ Ցանսենիոսի հետեւողաց դէմ նա մարդուս ազատութեան համար պատերազմած է չթողլով երբէք որ ո՛չ մի ժամանակ եւ ո՛չ մի տեղ նակատագրականաց աղանդը ոտքի վրայ մնայ (*Լեոն ԺԳ.* Libertas praestantissimum)։ *Դիտեցէ՛ք, թէ ինչպէս խմաս-*

տուն Քահանայապետը ազատութեան վարդապետութեան կը զուգէ կը միացնէ հոգւոյ անմեղութականութեան և անմահութեան մեծ վարդապետութիւնները. վասն զի առանց ասոնց կարելի չէ փրկել, կանգնել և բացատրել իսկ ազատութիւնը։ «Զգայական կարողութիւնը չի կրնար զանազան իրեր համեմատութեան դնել, ինչպես կրնայ բանականութիւնը, այլ պարզապես իր մը միայն կ'ըմբռնէ եւ ասոր համար այդ մեկ առարկային կապուած մնալով՝ որոշ կերպով կը շարժէ զգայական ախորժակը (բնազդումը). իսկ բանականութիւնը շատ առարկաներ մեկմեկու կը համեմատէ, անոր համար ալ մտաւոր ախորժակը, այսինքն կամքը, կրնայ շատ առարկաներէ շարժիլ եւ մեկ առարկայէ միայն շարժելու հարկին մէջ չի գտնուիր (Ս. Թովմ. Ա. խ. 82. յ. 2. առ. 3)։ Ազուինացւոյն սուր տեսութիւնը մեր խընդրոյն առանցքին կը մօտեցնէ. բանաւոր, մտային ախորժը, կամքը կրնայ շատ առարկաներէ շարժիլ, որ ըսել է միեւնոյն վախճանին հասնելու համար անպատճառ այս կամ այն միջոցին կապուած չէ. ըսել է կրնայ զանազան և բազմաթիւ միջոցներու մէջէն ուզածը ընտրել, որ ըսել է անտարբեր է այս կամ այն միջոցի և շարժառիթի հանդէպ, ազատ է։ Անտարբերութիւն այս կամ այն միջոցի հանդէպ, ահա՛ ազատութեան աւելի որոշ գաղափարը։ Բայց կրաւորական անտարբերութիւնը չէ ազատութեան ունեցածը, այլ ներգործական, այսինքն այն անտարբերութիւնն, որով կարող է այս կամ այն բանը ընտրել ինքն իր շարժումովն. և այսպէս կամքն անտարբեր է մասնակի բարւոյ կամ մասնակի չարի առջև, որ ըսել է կրնայ իր ազատութեամբ այս բարին ընտրել կամ հակառակ չարը գործել, կրնայ առաքինանալ և կրնայ մեղանչել, կրնայ սիրել և կրնայ ատել։ Անտարբեր է զանազան գործերու տեսակին առջև, ուստի կրնայ այս ինչ բարին կամ միւս բարին նախընտրել, կրնայ հետեւաբար շրջագայիլ կամ նստիլ, կրնայ խօսիլ կամ լռել. անտարբեր է նոյն իսկ ուզելու և չուզելու մէջ և այսպէս կրնայ այլ եւ այլ հակասական կամ ներհակ գործերու հետեւիլ։ Սակայն ամէն անտարբերութիւն և ամէն տեսակ գործ գործելու կարողութիւնն անպայմանօրէն կարեւոր չէ ազատութեան. կը բաւէ ասոր՝ որ կամքը կարենայ ուզել կամ չուզել. այսինքն արմատական ինքնորոշումն ունենայ իր գործողութեան և անով ազատ է, եթէ նոյն իսկ չկարենայ չարիք գործել կամ չարագործութիւնը իր բնութեան չպատշաճի։ Անտարբերութիւնն բարւոյ և չարի մէջտեղ՝ խեղճ անկեալ մարդկութեան թշուառութիւններէն մէկն է։ Եւ ասոր յայտնի ապացոյցն է հոն որ Աստուած ամենակարող, միահեծան և բացարձակօրէն ինքնիշխան Տէրն է և ազատ. սակայն չի պատշաճիր իր բնութեան բարւոյ և չարի մէջ ընտրութիւն ընել, համակ բարութիւն է և չարութիւնն ուրայումն է իւր բնութեան։ Ուսկից առաջ կու գայ մարդկային այս խեղճութիւնը, բացատրենք Լէոն ԺԳ-ի խօսքերով. մարդկային իմացակցութիւնը և կամքը «բացարձակ կատարելութիւն չունենալնուն համար՝ կրնայ պատահիլ յանախ որ միտքը առաջարկէ կամաց առարկայ մը, որ փոխանակ իրականապէս բարի ըլլալու, բարութեան երեւոյթը՝ շուքը միայն ունի, եւ այսու հանդերձ կամքը անոր կը փարի (իբրեւ բարւոյ)։ Բայց ինչպես սխալիլ կարենալն եւ իրոք սխալիլը թերութիւն մ'է, նոյնպես սխալ եւ խաբեական բարւոյ մը փարիլն՝ որոնք ալ ինքնիշխանութեան ապացոյց մի է, ինչպես է հիւանդութիւնը կեանքի, սակայն միշտ ազատութեան թերութիւնն է։ Նոյնպես կամքը, որովհետեւ բանականութենէ կախում ունի, երբ կը բաղձայ ունենալ առարկայ մը, որ ուղիղ բանականութենէ կը խոտորի, կ'իյնայ նոյնհետայն արմատական թերութեան մէջ, որ ազատութեան ապականութիւնն եւ զեղծումն է» (Libertas prestantissimum):

Ուրեմն մարդուս ամէն գործ լոկ ազատութեան անուամբ չ'արդարանար, ընդհակառակն ազատութեան վատթարացումն ու զեղծումը կրնայ ըլլալ, ըսել է որ հարկ է որոշել թէ ճշմարիտ ազատութիւնը ի՞նչ

բանի մէջ կը կայանայ։ Սակայն լաւ որոշելու համար հարկ է ազատութեան հետ չշփոթել անոր գործածութիւնը․ ազատութիւնը միշտ բարի է, մինչդեռ անոր գործածութիւնը կրնայ չար ըլլալ։ Ձեռքի շարժումի մէջ ազատ եմ․ կրնամ զայն շարժել ինկեալ մը վերականգնելու, վիրաւորեալ մը բժշկելու, անանկի մը ողորմութիւն տալու համար, ո՛հ բարերար շարժում, օրհնեա՛լ ըլլայ այդ ձեռքը։ Կրնամ սակայն նոյն ձեռքը շարժել ընկեր մը ապտակելու համար, վիրաւորելու համար ցմահ եղբայր մը, անմեղ մը, կողոպտելու համար դրացի մը և նոյն իսկ բարեգործ մը․ ո՛հ ոճիր, անիծեա՜լ ձեռք։ Լեզուս կրնամ գործածել ինչպէս որ ուզեմ, ազատ եմ․ սակայն գործածութիւն կայ պարսաւելի, գործածութիւն կայ գովելի․ անով կ'օրհնեմ երկնքի Տէրը և Հայրը, կ'օրհնեմ ընկերս, կը գովաբանեմ առաքինութիւնը, կ'ուսուցանեմ ճշմարտութիւնը․ կը պաշտպանեմ անմեղը, կը ջատագովեմ արդարը․ օրհնեալ բերա՛ն, երանի այդ շրթանց, բարերա՛ր լեզու։ Կրնամ սակայն նոյն բերանը, նոյն շրթներն, նոյն լեզուն շարժել հայհոյելով Աստուծոյ դէմ, անիծելով ընկերը, պարսաւելով առաքինութիւնը, բարձրացնելով չարութիւնը, ստութիւնը տարածելով, մոլորութիւն սփռելով․ անզգա՜մ լեզու, «զարդ անիրաւութեան... որ զամենայն մարմինն ապականէ», անկարգ լեզու, «լի թունօք մահաբերին (Յակոբ․ Գ․)։ Ի՞նչ կը նշանակէ այս, կը նշանակէ որ ազատութիւնը բարւոյ մէջ է ամենէն աւելի ու կը յայտնուի և անոր ճշմարիտ գործածութիւնը առ բարին է սահմանուած, մինչդեռ առ չարն՝ անոր խոտորումն է․ ո՛չ, ո՛չ, «մեղանչելու կարելիութիւնը ոչ ազատութիւն է, ո՛չ ալ ազատութեան մէկ մասն» (Ս․ Անսելմ․ Յղ․ ինքնիշ․ Գլ․ 1․)։ Զգենք որ հրեշտակային վարդապետն բամծնիս բացատրէ իր ոճով․ «Անձնիշխանութիւնը առ վախճան մը տանող իրերն ընտրելու մէջ այն դիրքը ունի, զոր ունի միտքը եզրակացութիւններու հանդէպ։ Արդ յայտնի է որ մտքի զօրութեան կը պատկանի ծանօթ սկզբունքներու հետեւութեամբ եզրակացութեան մը յանգիլ․ բայց եթէ եզրակացութեան մը դիմէ արհամարհելով սկզբունքներու կարգը, այս՝ անոր պակասութենէն առաջ կու գայ։ Հետեւաբար եթէ վախճանի կարգը պահելով անձնիշխանութիւնը կրնայ զանազան միջոցներ ընտրել, այդ՝ ազատութեան կատարելութիւնն է․ իսկ եթէ ընտրէ միջոց մը խոտորելով վախճանի կարգէն, ինչպէս է մեղանչելը, ասիկա ազատութեան թերութեան կը վերաբերի։ Հետեւաբար մեծագոյն է հրեշտակաց ազատութիւնը, որ չեն կրնար մեղանչել․ քան մերինը, որ կրնանք մեղանչել (Ի․ ԿԲ․ 8)։— Այս խորհրդածութեամբ պահելով անաղարտ ու անկաշկանդ մեր ազատութիւնը մենք կրնանք և պարտաւոր ենք անոր գործածութիւնը կանոնաւորել եւ սանձել իսկ․ «Տե՛ս զի ձիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ, եւ զամենայն մարմինս նոցա նուաճեմք» (Յակոբ․ Գ․)։ Ի հարկին զեղծումի առջեւն առնելու համար, հարկ է սանձել ազատութիւնը և այս սանձըն է որ անոր լաւ գործածութիւնը կ'երաշխաւորէ։ Ազատութիւնը գետ մի է, որ գետափի և թումբի սահմանները ունենալու է որ բարերար ըլլայ․ վերցուցէ՛ք ամէն սահման և ահա աւերիչ ողողում մը կ'ունենանք․ ըրէ՛ք որ առուներու կանոնաւոր եզրերու մէջէն հոսի՝ մեր արտերն ու ածուներն պիտի պարարտացնէ։

ՓՈՂ

(Շարունակելի)

ԳԱՐՏԻՆԱԼ ՀԱՍՈՒՆ

(Տեվամի)

Բիր իւմիթեյալը մախսուսա սլինաէն եէնի Պաատրիարքը ինթիխապ իթմէք իւզրէ Ջիմաա մանասթըրընտա սինոտ թէշքիլ էյլէմիշ օլան էրմէնի գաթօլիք եպիսկոպոսլարը պիլ իթթիֆագ Մօնս. Հասսունը սէչմիշ վէ չիմտիյէ գատար էէկտիկէրինտէն ֆարգլը պուլընմըշ օլան ճէմաաթըն իքի գըսմընըն ի-

տարէսինի տէ օնա թէսլիմ էյլէմէսինի Քիւրսի Շէրիֆտէն ըէճա իթմիշտիրլէր։ Հագիգաթը հալտէ տախի Քիւրսի Շէրիֆ «Կիլիկիա Պատրիարքը տօգու զընճը Անտոն Պետրոս» իւնվանընյլա վէ Քիւրսիսի Սթանպոլտա օլմագ իւզրէ Մօնս. Հասունընն վազիֆէսինի թաստիգ էյլէմիշ տիր։

Պունտան պէօյիւք խայրլար ինթիզար օլունընրտը իսէ տէ, թագտիրի իլահի Մօնս. Հասունընն էն աղըր վէ էն միւշքիլ թէճրիպէլէր բօթասընտան կէչէսինի թէնսիպ էյլէմիշտի։ Հագիգաթէն տէ, պիլ ախէրէ, օնուն ֆէզայիլինի տահա բարլագ սուրէթտէ իզհար էյլէյէն վէ օն իւչիւնճիւ Լէօն բարայա, ոնը գարտինալլըգ բայէսինէ թէրգիւէ գարար վէրտիրէն վագաալար պունընն պէօյլէ օլտուղընը իսպաթ իթմիշտիրլէր։

1870 տէ Կիլիկիա Բաթրիգի քէնտի Եպիսկոպոսլարընյլա պէրապէր Տիեզերական Ժողովտա պուլընտըղը սրբատա, Տէրսասէթտէ պիր հարիգ զուհուր իտիպ, քէնտի իգամէթկեահը գուրպինտէ վագը կզերանոյը վէ քէնտինին թէսիսքէրտէսի օլան Անարատ Յղութիւն Թարիգաթը բահիպէլէրինին պէօյիւք մանասթըրընը ժահվ իյլէմիշ օլտուղընն խապէրինի ալը։ Պու ֆէլաքէթ, իլերիտէ պազը ասհապը իսեան թարաֆընտան վէ քիպր ու զուրուր սայիգասընյլա զուհուր իտէճէք օլան հերձուածն ատէթա պիր մուգատտէմէյի էլիմէսի կիպի իտի։

Էրմէնի գաթոլիք ճէմաաթը միյանընտա սէրզէտէյի զուհուր օլան պու հերձուածին հիքեայէսի մալիւմ տիր, եանի, քէնտի հազրգի պատրիարքլարընա վէ սահին Զօպանլարընա սատրգ գալան վէ ճէմաաթն էքսէրիյէթինի թէչքիլ էյլէյէն ճիտտի գաթոլիքլէրէ գարշը զուլմ, չիտտէթ վէ եաղմակիրլիք հիքեայէսի, մաէթթէէսսիւֆ, հէր քէսճէ մալիւմ տըր։ Պու հերձուածողլարընն, պազը խրիսթիան հիւքիւմաթն միւմէսսիլլէրինին տէ մուավէնէթլէրիյլէ, նէ կէօնա էնթրիկալար, նէ թարզ մանօվրալարլա, օ վագթա գատար պիհագգին մազհար օլտուղը Հիւքիւմէթի սէնիյէնին թէվէճճիւհիւնտէն Կիլիկիա Բաթրիգինի իսգաթ իթմէյէ միւվէֆֆագ օլտուգլարը կիզլէնէճէք ահվալտէն տէյիլ տիրլէր։ Շէօյլէ քի, էրմէնի գաթոլիքլէրինին օ գատար սէվիլմիշ վէ օ գատար հիւրմէթէ նայիլ օլմուշ օլան ըէյիսի, 1872 թարիխինտէ Մօնս. Հասուն Բօմայա իլթիճայա մէճլիսուր օլտու։

Պու, ֆայիտէտէն խալի օլմայան մէնֆա տէօրթ սէնէ տէվամ իթտի, վէ պու միւտէթ զարֆընտա Մօնս. Հասուն եէկտիկէրինի միւթէագզպ թարիխի էսէրլէրիյլէ, էրմէնի մէսէլէսինին մահիյէթինի թէվզիհ, եէնի հերձուածողլարընն նալայրգ էֆքեարը միւսթէթիրէսինի թագպիհ վէ ատէտի մահտուտ պիր թագըմ ասիլէրի սիյանէթէն Կիլիկիա Բաթրիգլիյինէ մէրպութ գաթոլիքլէրի էզմէքտէքի խաթայը Բարիզ մուահէտէսինէ վագը իվզա էյլէմիշ օլան Հիւքիւմէթլէրին, ալէլ խուսուս, Հիւքիւմէթի սէնիյէնին, բիչի էնզարընա վազ էյլէմիշ տիր։

Պու իլզահաթ սայէսինտէ վէ պիզզաթ քէնտի մէսլէքլէրի նէթիճէսի օլարագ, եէնի հերձուածողլար զաթէն 1876 սէնէսինտէ, քէնտիլէրին պիւթիւն գուվվէթինի թէչվիլ էյլէյէն սէհապէթի բէսմիյէնին պէօյիւք ըսմընը զայիպ էյլէմիշլէրտի։

Մա մաֆիյհ, Բէյիսի մէշրու ալէյհինէ սատրը օլմուշ օլան նէֆի էմրի հէնուզ պազի օլտուղը պու. սրբատա, սիւրիւսիւնիւն ուղրընա ֆէտայը նէֆս էյլէմէյի պիլէն սահին Զօպան, Սթանպոլա ավտէթ իտէրէք տօղրուտան տօղրույա Հիւքիւմէթի Օսմանիյէ նէզտինտէ քէնտի հազգընը միւտաֆաայա վէ բիճալը օս ֆանիէնին ատալէթինէ միւրաճաաթա գարար վէրիր։ Օնը եազընտան թանրտրդը նիսպէթինտէ հազգընտա պէօյիւք պիր թէվէճճիւհ բէրվէրտէ էյլէյէն տօգուղընճը Պիոս Բաբա, Մօնս. Հասունընն միւֆարազաթընտան էվվէլ միւշարիլէյի հուզուրունա գապուլ վէ պու թէչէպպիւսիւնտէ պէօյիւք թէհլիքէլէր մէլհուզ օլտուղընը պէյան էյլէմիշ իսէ տէ, Մօնս. Հասուն ճէվապէն «Էյ ազիզ բէտէր, մէսէլէ եա իհրազը զալէպէ իթմէք վէ եա էօլմէք իւզէրինէ տիր։ Եա պանա թէվֆի իթմիշ օլտուղընը զ սիւրիյիւ գուրթարմագ վէ եախօտ օնը, հերձուածողլարընն տուզագ-

լարընա մարուզ պրագմաղա միւսաատէ էյլէմէք · Նիհայէթ , պիզզաթ եանըըշ խօլա սաբըըշ օլանլարը տա հազըզաթա չէվիրմէք մէսէլէսի տիր պու ։» Ֆիլ վագը տա հէմէն միւֆարագաթընտա այնէն շու «Եա մաղլուպ իթմէք վէ եախօտ օլմէք» *խըպրէսինի Թէքրար էյլէմիշ տիր ։*

Իշթէ , Մօնս . Հասունըն , էմնայը հայաթընտա բէք չօգ աէֆա հիմայէյի մախսուսէսինի կէօրմիւշ օլտուղը Հիքմէթի իլահիյէ պու մէսէլէտէ բանա պիր սուրէթտէ Թէճէլլի էյլէմէյէ պաշլատը ։ Տէրսաատէթէ ավտէթ խաիպ պիր միւտտէթ տէ պիլա վագտա տուրտուգտան սօնրա , քէնտի իլք Թէշէպպիւս վէ միւրաճաաթլարընըն , պիր վաղըթ պու մէսէլէտէ կէօսթէրմիշ օլտուղը էսէրի զաաֆը Թէլաֆի էյլէմէք իսթէյէն Ֆրանսա սէֆիրի Մ . Ֆուրնիէ Թարաֆընտան տա մազհարը հիմայէ օլտուղընը կէօրմիւշ տիր ։ Քէզալիք Տէրսաատէթ Բաբա վէքիլի պուլընան Մօնս . Կրասէլլի վէ պիլախէրէ այնի վէքեալէթէ Թաեյին օլունան Մօնս . Վինչէնցօ Վանութէլլի Թարաֆլարընտան տա Քիւրսիի չէրիֆ Նամընա հիմայէ վէ միւտաֆաա խուսուսէսի իւզէրինէ էվվէլ էմրիտէ քէնտինին Սթանպօլտա պագաաընա միւսաատէ օլունմըշ տըր ։ Մօնս . Հասունըն պու միւսաատէսէն պիլ իսթիֆատէ , քէնտինին նէֆի խուսուսի միւտտէթճէ էրմէնի գաթօլիքլէրինին իպրազ էյլէմիշ օլտուգլարը սէպաթը , պիր կիւն չայանը զիքր պիր Նումունը պէլիղ իլէ ալէնէն մէտհ էյլէմիշ վէ սիւրիւսիւյլէ պէրապէր հէր ան ու զէման զաթը հազրէթի բատիշահիյէ օլան սատագաթընտա տէվամ խուէճէյինի պէյան վէ Նումայընըն նիհայէթինտէ , եէնի հերձուածողլարը վագիֆէյի իթաաթա րիւճուա վէ Քիլիսա խաարէյի մէշրուաընա ինիկըյատը միւթէվագիտէ պուլընմաղա տավէթ իթմիշ տիր ։

Նիհայէթ Պապը Ալի , օ վագըթա գատար միւթէզարրըր խալէն գաթօլիքլէրի պիր լութֆը քեամիլ ու թամմ իլէ Թալթիֆ պույուրտը , չէօյլէ քի , եէնի հերձուածողլար Թարաֆընտան զասպ օլունմըշ օլան պիլ ճիւմլէ քիլիսալար , մէքթէպլէր վէ սայիր միւէսսէսէլէր Թէքրար քէնտիլէրէ իատէ օլընըրլար ։ Մօնս . Հասունըն բուհանի վէ ճիսմանի հէր իքի սըֆաթըյլա տա պէ Թէքրար Թանըլտըղ մազհարը իլթիֆաթը շահանէ օլուր վէ սուրէթը ըէսմիյէտէ հուզուրը բատիշահիյէ գապուլ օլընտըղընտա , Զաթը հազրէթի Թաճտարի պիլէ , Թէպաայը էստիգասընըն հուզուզընը ինզազ խուէպիլմէսինտէն միւթէվէլլիտ մահզուզիյէթլէրինի պէյան պույուրտը ։

(Մապատի վար)

ԵՐ. ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՎԱՍՆ

յեցին ժամանակիս ազգիս մերոյ հակառակութեան որ ընդ միմեանս վասն Կաթողիկութեան, եւ յաղագս որոյ յայտնելոյ ումեմն երկրորդ յաւաաւորիկ կոչեցելոյ յանանց, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն համախոհից նորին:

Բանկի զթագուցեալ քահանայսն զայնոսիկ զոր ի վերայ ասացի , յետ ութ և ինն ամսոց ուրոյն ուրոյն տուժեալ տուգանէր , յետ խրատանացն յափշտակելոյն՝ զպէս պէս ընծայս և զյոլով դրամս առնելով , եթէ ի քահանայից , եթէ ի ժողովրդոց և այն երիցս և չորիցս անգամ, ըստ օրինի մէյխանաճացն և թութունճոյն Իստամպօլու , զոր բռնաւորք զամսչէքս առնուն ի նոցանէ . այսպէս ըստ սարասի նոցին անխնայ տուգանէին , թո՛ղ զկրաւունս նոցա , զորս ի հարսանեաց , ի նշանից , ի մկրտութեանց , ի թաղմանց , յաշխահամբուրիցն յապաւէին , յափշտակէին և մախէին ի կոկորդս իւրեանց և յոյլազգեացն ։ Դարձեալ յառնէ մինչէ որ թաքչեալ կայր՝ զորոյ զառնն կոխեալ և ոչ գտին , յետ եօթն ամաց , յաղագս գաթուլիկութեան առնեն ի նմանէ երեք հարիւր ոսկիս և ապա արդարացուցեալ զնա՝ զօրհնութեամն կոնդակս կարդացին վասն նորա յեղեկեցլս , և ապա ի տանէ արտաքս ելեալ և զարեւ և-

տես։ Դարձեալ զԵրաման հանեն կրկնակի և առաքեցին յԱսիա, Եւրոպեայ ընդ ամենայն քաղաքս և ի գիւղս՝ հարցաքննել և թէֆթիշ առնել զգաթուլիկն, որոց գնացեալ զափուճի պաշիք և չավուշք, զորս գտանէին ի Քրիստոնէիցն՝ ի բանտս, ի շղթայս և ի կոճեղս արկանէին զանմեղ քրիստոնեայսն, նեղէին և գան հարկանէին և ապա առեալ զբազում տուգանս և ապա հաղիւ արձակէին։ Որ և լուաք իսկ յումեմնէ Հոռոմէ ձկնավաճառէ որ ի կողմանցն Նիկնէու էր, զի անիծանէր և հայհոյէր և անաթեմայս կարգայր Աւետիք Փաթրկին մերոյ, նաև զազգս մեր նախատէր ասելով թէ ի մեր գիւղիցն ևս ճէրիմէ[1] առեալ են բռնաւորք թէ դուք ևս գաթուլիք էք լեալ։ Եւ իբրև զկոդրէն արարեալ[2] զճերիմէն ի վերայ գիւղիս մերոյ և արկեալ են ի վերայ տան իմոյ ութ զրուշս, և ահա պարտք երէկ յերկէս հանդերձ թղթով, թէ վասն գաթուլիկութեան ութ զրուշ պարտք արարեալ զճէրիմէ տուաք, արդ առաքեա զութ զրուշն զի վճարեսցուք պարտատէրին։ Դարձեալ այլազգիք քաղաքիս վասն ծաղրածութեան, Հրէիցն գաթուլիկ ձայնէին ի շուկայս և ի հրապարակս սակս նախատելոյ զազգս մեր։ Իսկ Հրեայքն ոչ ընդունեալ զանունն զայն՝ հայհոյէին և այլազգիքն լուեալ զհայհոյանս ի Հրէիցն ծափ զծափ հարեալ ծիծաղէին։

Դարձեալ ի վիճակս և ի թեմս եպիսկոպոսայն որ յԱսիա զգիրս բուռնս առաքէր եպիսկոպոսունն զգրամ պահանջելով ի նոցանէ, և «Եթէ ոչ տայք, ասէր, զձեզ բռնութեամբ և իշղարով ի գրունս ածեմ և Գաթուլիկք են սոքա ասելով տուգանեմ նոցա։ Որ և առաքեաց Ֆէրմանով զզափուճի պաշի ի քաղաքն Իզմիր, և կալեալ զեպիսկոպոսայն քաղաքին զՅովսէփ վարդապետն որ յԷջմիածնայ՝ կալան զնա և եղին ի բանտի թէ Գաթուլիկ ես, և բռնաւորն ասիպէր թէ տանիմ զքեզ առ թագաւորն, քանզի Ֆէրմանն այնպէս գրեալ էր։ Ապա ի մէջ անկեալ արեւելեան վաճառականքն և տեղւոյն տօվլէթաւորքն եւ վկայեալ վասն նորա թէ մեք զսա հայ գիտեմք եւ այնքան նեղեալ զնոսա վասն տանելոյ զեպիսկոպոսն մինչեւ վեց քսակ դրամ տուեալ եւ ապա հաճեալ զկամս բռնաւորին արդ առեալ ի դատաւորէն վկայութեամբ քաղաքացւոցն եւ ապա ի բաց թողին զնա։ Եւ ապա յաւուրս յայսոսիկ եկն նուիրակ ի Ս. Էջմիածնայ սրբալոյս միւռոնաւն ի Կ. Պոլիս եւ անտի յԷսրէնէ, եւ Աւետիք յետ ինչ աւուրց խնդրեալ ի նուիրակէն քանի մը բաց կոնդակ Հոգեւոր Տէրին, քանզի օրէն է նուիրակաց կրել զբաց կոնդակս, եւ նուիրակն ոչ տայր ասելով թէ զի՞նչ կամիս, ասա՛ զի գրեցից։ Իսկ Փաթրկին վասն այն խնդրէր զկոնդակն զի ի նոսա ըստ կամայն իւրոց գրեսցէ, զոմն որ կամի բանադրեսցէ եւ անուամբ կաթողիկոսին տուգանեսցէ, եւ զոր չարիս կամի ինքն անուամբ նորին յառաջացուսցէ։ Իսկ ընդդիմանալ նուիրակին եւ ոչ տալն ասէ ցնա Փաթրիկն. զամենայն զժողովեալ դրամդ ի նուիրակութենէ՝ զբովանդակն եւ կամ զկէսն առնելոց եմ ի քէն ի սակաւ աւուրս, եւ ապա արձակեցից զքեզ աստի, եւ ապա տուեալ նմա երկու հարիւր զրուշս եւ փրծաւ ի նմանէ։ Դարձեալ զեպիսկոպոսունս Վանայ եւ քաղաքաց, որք ի վաղուց հետէ նստէին զնոսա փոխէր վասն կաշառաց, զոմանս փոխեաց եւ յոմանց զգինսն էառ։

Վասն այսորիկ զայս ամենայն լուեալ եւ տեսեալ մարդկան՝ հիացեալք և զարմացեալք ասէին. Զի՞նչ կամ՞ցին չարահնարքս այսոքիկ լինել, եւ կոչէին զնա Ներոն եւ Նաբուգոդոնոսոր, եւ այլք Անտիոքոս եւ Հերոդէս. իսկ ոմանք երկրորդ Յուլիանոս եւ Լանկթամուր, վասն նմանութեան վարուց նոցին եւ բարուց, մանաւանդ վասն գործոցն։ Եւ եթէ ոչ կարէին աւուրք նոցա, կարծեմ թէ առաւելագոյն լինէին քան զնոսա։

(Շարունակելի)

[1] Ցուգանք։

[2] Բաշխելով տներու վրայ։

ԵԱԹԵՐ(*)

(Շար.)

Ռ. ԱՐԱՐ. Դ. ՑԵՍԱՐԱՆ

Արտաշես, Ասափ

Արտաշես

Ո՛վ այսքան մեծ ծառայութեան մոռացութիւն խոտելի,
Գահի խուռներն գործերուն անխուսելի հետեւանք։
Ամէն իշխան շրջապատուած աղմկայոյզ հոգերէ՝
Դէպի նոր առարկաներ կը ձգձգուի անդադար.
Ապագան զայն կ'անհանդստէ, կը հարուածէ զայն ներկան.
Բայց անցեալը փայլակէն արագ մեզմէ խոյս կու տայ։
Եւ այնքան մարդոցմէ, որ ամէն ժամ կը փութան
Շահադէտ գործերնին դրուատելու մեր առջեւ,
Մէկ մը չի գտնուիր, որ ճշմարիտ եռանդով
Մեր փառքին և պատուին ըստ արժանւոյն հոգ տանի.
Արդիւնքը մոռցուած փութայ ձըգել միտքերնիս։
Առնք փոյթ են մեզ ապրելու ինչ որ արժան է պատժել։
Ո՜հ թշնամանքը մանաւանդ թող խուսափի վրէժէս.
Քան երախտիք մ'այդքան չքնաղ շնորհապարտ իղձերէս։
Եւ ո՞վ երբէք յանձն կ'առնու զոհուիլ ի սէր արքային։
Մահկանացուն՝ որ ինձ հանդէպ այդքան եռանդ ցոյց տուաւ
Կ'ապրի՞ դեռ։

Ասափ

Կը տեսնէ դեռ աստղը որ քեզ լոյս կու տայ։

Արտաշես

Ինչո՞ւ համար իրեն արդար վարձքը չուզեց վաղագոյն։
Ո՞ր երկիրն հեռաւոր կը զրկէ զինք պարգեւէս։

Ասափ

Նստած յաճախակի քու պալատիդ դրան մէջ,
Անտարտո՞ւնջ ե՛ւ քեզի ե՛ւ իր նսեմ բախտին դէմ,
Կ'անցընէ իրեն կեանքին օրերը խեղճ ու թշուառ։

Արտաշես

Լաւութիւնն ա՛յնչափ աւելի պարտական եմ չմոռնալ
Որչափ ան ինք զինք կը մոռնայիր անուն ի՞նչ է արդեօք։

Ասափ

Մուրթք է կը կոչուի, ինչպէս առաջ կարդացի։

Արտաշես

Իսկ հայրենիքն։

(*) Տես թիւ 119, էջ 696

Ասափ

Տէ՛ր Արքայ, քանի որ հարկ է քեզ ըսել,
Մահուան դատապարտուած գերիներէն մէկն է նա,
Ափերէն Յորդանանու՝ Եփրատի ափը բերուած։

Արտաշես

Ո՛վ երկինք. հրեա՞յ է նա. մինչդեռ կեանքէս թանկագին՝
Իմ սեփական հպատակներս մօտ էին զիս զրկելու։
Հրեա՛յ մը կը հանէ անոնց ճիգերն ի դերեւ,
Հրեա՛յ մը փրկեց զիս Պարսիկներու սուսերէն։
Սակայն քանի որ զիս փրկեց, ով ալ ըլլայ, հոգըս չէ։
Ահաւասիկ մէկը կու գայ։

Դ. ՏԵՍԱՐԱՆ

Արտաշես, Հիդասպ, Ասափ

Հիդասպ

Տէր իմ։

Արտաշես

Նայէ՛ սա դռնէն,
Տե՛ս, պալատական իշխաններէս մէկը կա՞յ։

Հիդասպ

Համան դեռ չը լուսցած փութացեր է դուռդ գալ։

Արտաշես

Ներս թող մտնէ, թերեւս իրեն խորհուրդը լոյս տայ ինծի։

Ե. ՏԵՍԱՐԱՆ

Արտաշես, Համաճ, Հիդասպ, Ասափ

Արտաշես

Մօտեցի՛ր, ամրապի՛նդ նեցուկ տիրոջդ գահուն,
Հոգի՛դ խորհուրդներուս որ մինակ ա՛յնչս փ անգամ
Թեթեւցուցիր ծանրակշիռ բեռը ձեռքիս մականին,
Սաղմոսանք մը թագուն կը տագնապէ իմ հոգիս։
Դիտեմ մաքրութիւնն զքեզ վառող եռանդին։
Սուտը ընաւ չէ խառնուած քու թանկագին խօսքերուդ.
Իմ սեփական շահը միայն է ջանքերուդ նպատակ։
Ըսէ՛, վեհանձն իշխան մը ի՞նչ պարտական է ընելու։
Երբ իր յարգած հպատակին փառք եւ պատիւ տալ ուզէ։
Ո՞ր մեծապայծառ արքայաշուք նշանով
Արժանիքն հաւատարմի մը կարող եմ վարձատրել։
Մի՛ դներ երբեք սահման շնորհապարտ իղձերուս,
Անծայրածիր իշխանութիւնս խորհուրդներուդ ըրէ չափ։

Համաճ (ցած ձայնով)

Քեզի համար է, Համան, որ որոշում պիտի տաս.
Եւ քեզմէ զատ ո՞ր մարդն արդեօք վարձատրել կարող է։

Արտաշես

Ի՞նչ կը խորհիս։

Համաճ

Տէ՛ր, կը նայիմ, կը նկատեմ
Ընթացքն ու սովորոյթն Արիական Արքայից.
Բայց ի զուր կ'անցընեմ զամէնքն աչքիս առջեւէն։
Ի՞նչ են անոնք քովդ որ իրենց օրինակին հետեւիս.
Օրինակ՝ արքայութիւնդ յաջորդներուդ թող ըլլայ։
Հաւատարիմ հրպատակէդ մէկը կ'ուզես վարձատրել։
Վեհանձն ոգին միայն պատուէ հաճոյք զգալ կարող է.
Ուստի, Տէ՛ր, կ'ուզեմ որ այդ մահկանացուն երջանիկ
Այսօր քեզի հանդունատիպ ծիրանիով զարդարուի.
Շողշողայ ճակտին վրայ սրբազան թագն արքունի.
Աչտանակած՝ չքեղազարդ նժոյգներէդ մէկին վրայ
Շօշ քաղքին մէջ հրապարակաւ շրջագայի սիղաճեմ.
Ի լրումն փառքի, վայելչութեան վեհաշուք,
Նախարար մը հոյակապ՝ իշխանութեամբ, ճոխութեամբ,
Մէկ խօսքով, քեզմէ վերջ պետութեանդ մէջ առաջին,
Անոր սօ՛ս երիւարն սանձէն բռնած քալեցնէ.
Եւ ինքնին ընթանալով շրջեղաշուք ըզգեստով
Հրապարակաւ, ամէնուրեք աղաղակէ բարձրաձայն.
«Մահկանացո՛ւք, խոնարհեցէ՛ք այսպէս ահա թագաւորն
«Արժանաւոր մարդուն պատիւ հաւատարմին թագ կուտայ։

Արտաշես

Իմաստութիւնն ինքնին, կը զգամ, կըլլայ քեզի թելադիր.
Իղձերուս հետ զգացումներդ են գլխովին միաբան։
Անյապաղ փութա՛, գնա՛, և ըսածներդ բովանդակ
Կ'ուզեմ որ կատարուին, ի գործ դրուին կէտ առ կէտ։
Լաւ արարքն այսուհետեւ պիտի չմնայ մոռցուած։
Պալատին դրան առջեւէն փութով հրեայ Մուրթքէն ա՛ռ,
Զինք փառաւորել կը փափաքիմ ես այսօր։
Իր յաղթանակը կարդաղրէ՛, իր առջեւէն ընթացի՛ր,
Գոչէ՛, թնդացո՛ւր Շօշ քաղաքն իր անունով.
Պատուէր տուր որ իր առջեւ ամէնքն իյնան ծնրադիր։
Դո՛ւրս ելէք ամէնքնիդ ալ։

Համաճ (առանձին)

Ատուածնե՛ր։

(Շարունակելի)

ԼԻՈՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԻՐԱՒԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

Մ. Լամարդէլ Ֆրանսայի արդի կառավարութեան Եկեղեցւոյ դէմ ըրածները թուելէ յետոյ կը յաւելու.

«Բայց, այսօրինակ գործելով, ինչպէս կրնային այս մարդիկը յուսալ թէ իրենց արարքը տեւական պիտի ըլլայ։»

«Արդեօք ըսին թէ՝ Այո՛ Քահանայապետը դէմ պիտի կենայ բայց եպիսկոպոսները, ժառանգաւորները, հաւատացեալները, մեզի պէս, արժէք պիտի չտան Քահանայապետին հրամաններուն և մեզի պիտի հնազանդին...։»

«Բայց իրարու կ'ըսէին թէ՝ Քահանայապետին հաւանութիւնը պիտի ընդունինք ապահովաբար։ Ինչպէս։ Ինչ որ կը մտածէին և իրարու կը փսփսային, բաժանման յանձնաժողովին նախագահը օր մը անխոհեմութեամբ բարձրաձայն ըսաւ ծերակոյտին մէջ. «Եկեղեցւոյ Գլուխը, կարելի՞ է որ դէմ կենայ. այս բանիս համար պիտի պարտաւորուի շատ մը միլիոններ զոհել։ Մենք կրնանք հանգիստ ըլլալ։»

«Մանաւանդ է այն ազնիւ, գեղեցիկ մեծ արիութիւնը որով Պիոս Ժ. պատասխանեց այս ստոր զրպարտութեան։ Թո՛ղ Եկեղեցին աղքատ ըլլայ, զրկուի՛ իր ստացուածներէն, ստիպուի՛ հաւատացեալներու ողորմութեամբը օրը օրին ապրելու, հո՛գ չէ։ Առաջին անգամ այսպէս երեւցաւ նա երկրիս վրայ, և աշխարհակալեց զայն։ Բայց ամէն բանէ առաջ, ամէն բանէ աւելի թո՛ղ անարատ պահէ նա իր վարդապետութիւնը, նուիրապետութիւնը բարեկարգութիւնը։»

«Ս. Քահանայապետը 1905 ի կազմակերպութիւնը մերժեց որովհետեւ ասոնց կը վնասէր, և ոչ թէ որովհետեւ ան անոլորակելի կոպտութիւն մըն էր իր իշխանութեան և արժանապատուութեան դէմ յանցապարտ կառավարութեան մը կողմէ...։»

«Եւ ամէն անկողմնակալ մարդիկ հիմայ դէպքերէն լուսաւորուած ստիպեալ են խոստովանելու որ Պիոս Ժ. Ֆրանսայի եկեղեցին փրկեց՝ միահարուած տապալելով այդ օրինադրութիւնը, որ խաբուսիկ երեւոյթներու տակ, թերեւս զինք ստրկացնելու համար մինչեւ. հիմայ հնարուած միջոցներուն ամենէն զարմանալին էր։ Ցարդ եղած խոստովանութիւնները այլ եւս տարակոյս չեն թողուր այս մասին։»

Բանախօսը ապա ցոյց կու տայ թէ ինչ անել վիճակի պիտի դատապարտուին կարգադրութեան ամէն փորձեր ցորչափ Ֆրանսա պաշտօնապէս չբանակցի Ս. Դահին հետ։

Հռոմի և Տէրութեան միջև համաձայնութեան չգոյութենէն յառաջ եկած այս անհանդուրժելի վիճակը այլ և այլ կերպով վնասակար է Ֆրանսայի և Եկեղեցւոյ։ Եկեղեցին անշուշտ ճգնաժամ մը կ'անցընէ։ Բայց ի՛նչ քաջութեամբ և ի՛նչ շահեկան կերպով կը կրէ անոր տագնապները։»

«Ամէն ժամանակէ աւելի հիմայ կաթողիկէ բարեգործական հաստատութիւններ, ձեռնարկներ կը ծաղկին այս երկրին ամէն կողմերը։ Հիները աւելի կենդանութիւն ցոյց կու տան, և ամէն օր նորեր երեւան կուգան. անկելանոցներ, սպասաւորանոցներ, ժողովրդական դրագրատուն, նշանաւորութեան ընկերութիւններ, մարմնամարզական ընկերութիւններ, ռազմավարժական ընկերութիւններ եւն. եւն...։ Մեր հակառակորդները կը նախանձին և կը փափաքին նոյնպիսի կազմակերպութիւններ ունենալ։ Ասոր համար իրենց տրամադրութեան տակ պիտի ունենան պէտք եղած դրամը, մեր իրենց տուրք տուած դրամը։ Բայց անոնք միշտ զուրկ պիտի մնան քրիստոնէական հոգիէն, քրիստոնէական անձնանուիրութենէն և մանաւանդ քահանայական անձնանուիրութենէն որ մինչև ին քնազոհութեան կը հասնի։ Ահա՛ ասոր համար եկեղեցին այս ցաւալի տագնապէն պիտի ելլէ աւելի եւս ուժովցած. ասոր համար դէպքերը անդամ մը եւս պիտի հաստատեն սա նշանաւոր խօսքը. «Որբ փոքրիկը փչէ, ցնցէ եկեղեցւոյ ծառը, անոր չորցած ճիւղերը միայն վար կը թափէ։»

«Այո՛ Եկեղեցին աւելի եւս մեծ պիտի վերականգնի այս զինք ընկճող հարուածին տակէն։ Բայց Ցրանսա՞ն։ Ան այժմ կը նայի իր սահմաններէն անդին, և կը տեսնէ ինչ որ իրմէ յաւիտակեց՝ Հռոմի հետ պաշտօնական յարաբերութեանց խզումը։ Ցատկապէս աչքը կը դարձնէ դէպի Ալբեւելքի երկիրները Փոքր. Ասիա, Սիւրիա, ամբողջ Թրքական Ասիան, դէպի այն բոլոր երկիրները, որոնց վրայ պիտի յարձակին ի մօտոյ բոլոր մեծ Տէրութիւնները՝ — գիտենք զայս մանաւանդ Բոստոնի մէջ 1911ին Ռուս և Գերման կայսերաց տեսակցութենէն յետոյ — որպէս զի հանեն այն տեղերէն այն անհուն հարստութիւնները, զորոնք ատենով կ'արտադրէին եւ զորոնք կարելի է տասնապատկել շահագործման (exploitation) նոր եղանակներով և հաղորդակցութեան կատարելագործեալ միջոցներով զորս արդի աշխարհի տրամադրութեան տակ կը դնեն գիտութիւնն ու յառաջադիմութիւնը։»

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՏՕՆԱՑՈՑՑ

Նոյեմբեր 23 † Կիր. գկ. Բ. Ցիսնակաց

24 Բշ. դա. Ս. կուսանացն Ցուլիանեայ եւ Վասիլուհւոյ:

25 Գշ. դկ. Ս. Առաքելոցն Յակոբայ եւ Շմաւոնի:

26 Դշ. սա. Պահոց:

27 Եշ. սկ. Դենարիոսի եպիսկ.ին եւ Մեկիւրիոսի զինաւորին եւ Յակովբայ եւ իրաւափառայ:

28 Ուրբ. բա. Պահոց:

29 Շբ. բկ. Անդրէի Առաքելոյն:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար.)

Վաղենտիանոս կայսեր մեռնելէն յետոյ 375ին արիոսական Վալէս կայսրը սկսաւ ինքնիշխան թագաւորել և հրաման հանեց որ ամէն միայնակեցները իրենց ընտրանիներէն ելնեն և ղեկուցչ գրուին։ Այս հրամանին հետեւանքով մեծ հալածանք մը եղաւ, քաղաքներու և անապատներու մէջ շատ վանքեր և միայնակեցներու խուցեր այրուեցան, և շատերը մեռան ի սէր կրօնաւորութեան։ Յովհան այս եղելութիւններէն յուզուած՝ գիրք մը յօրինեց որուն մէջ կը ջատագովէ կրօնաւորութիւնը։ Անապատի վեցամեայ հանդարտութեան միջոցին ուրիշ շատ ճառեր և գիրքեր ալ շարադրեց։

Կը պատմուի թէ այս առանձնութեան միջոցին Յովհաննու երեւցան Պետրոս և Յովհաննէս առաքեալները Պետրոս իրեն տուաւ բանալի մը ի նշան իր ապագայ քահանայութեան և եպիսկոպսութեան, իսկ Յովհաննէս՝ մատեան մը, ի նշան իր Ս. Գրոց կատարեալ մեկնիչ ըլլալուն։

Յովհան որ աշխարհի լոյս ըլլալու սահմանուած էր, ստիպուեցաւ Անտիոք դառնալ, ստոյգ հիւանդութեան մը պատճառաւ։ Եւ հոն շատ ուրախացաւ տեսնելով Ս. Մելիտոսը որ Վաղէսի մեռնելէն ետքը Մեծին Թէոդոսի հրամանաւ տաքորքէ դարձեր էր։ Յովհան ապաքինելէն վերջը Ս. Մելիտոսին ստիպմամբ սարկաւագ ձեռնադրուեցաւ 380ին. և հինգ տարի վարեց այն պաշտօնը բայց շատ նեղութեամբ. որովհետեւ ոչ միայն միայնակեցութեան հաւատարմութենէն զրկուեցաւ, այլ և եկեղեցւոյ հոգերուն մատնուեցաւ, մանաւանդ Մելիտեանց և Պաւլինեանց երկպառակութեանց պատճառաւ։

Որովհետեւ Ս. Մելիտոսի վախճանելէն ետքը Անտիոքացիներէն ոմանք անոր իբրեւ յաջորդ ընտրեցին Փլաբիանոսը և ոմանք Պաւլինոսը։ Այս երկպառակութիւնը բարեբախտաբար շատ չտեւեց, որովհետեւ Փլաբիանոս՝ ընտրիւ իր ընտիր ձիրքերուն, ամենէն ճանչցուեցաւ քիչ ատենէն։ Յովհան 386ին Փլաբիանոս հայրապետէն քահանայ ձեռնադրուեցաւ՝ հրեշտակի մը երեւման հետեւանքով որ հայրապետին հրամայեց Յովհանը քահանայ ձեռնադրել, և Յովհաննու՝ չընդդիմանալ։ Ձեռնադրութեան միջոցին, Ս. Հոգին Յովհաննու վրայ աղաւնակերպ երեւցաւ։

Յովհան քահանայ ըլլալէն վերջը խօսքով ու գրով սկսաւ մի-իմաստել հաւատացեալները, որոնք զմայլած յաւիտակուա՛ծ իր հմայիչ ճարտարախօսութենէն կուչեցին զինքը Ոսկի-շրերան։ Այս միջոցին շարադրեց հին եւ նոր Կտակարանի մեկնութիւնը քարոզներու ձեւով, որոնց մէջ ակնարկող կը փայլին իր արտակարգ առաւելութիւնները, վսեմ հանճարը, երկնաթռիչ ոգին, սուրբ եռանդը. հոգոր ոճը։

12 տարի քահանայական պաշտօնը վարեց Անտիոքի մէջ, խօսքով, գործքով ու գրով բարիք ընելով ամենուն։

Նոյն ատենները, 397 Սեպտեմբեր 27ին վախճանեցաւ Կ. Պոլսոյ Նեքտարիոս պատրիարքը։ Մեծին Թէոդոսի որդին, Արկադիոս կայսրը և ամբողջ ժողովուրդը լաւ տեղեակ ըլլալով Անտիոքի Յովհան քահանային սրբութեան և իմաստութեան, որոշեցին զանիկա Կ. Պոլսոյ պատրիարք ընել։ Ուստի կայսրը հրո-

վարտակ ղրկեց Աստերիոս կոմսին, որ առանց Անտիոքացիները աղմկելու ծածկաբար Յովհան քահանան Կ. Պոլիս ղրկէ: Աստերիոս փութով կատարեց կայսեր հրամանը:

Յովհաննու Կ. Պոլիս մտնելէն առաջ հոն հաւաքուած էին Թագաւորին հրամանաւ շատ եպիսկոպոսներ, որոնց մէջ էր նաեւ Թէոփիլոս Աղեքսանդրիոյ պատրիարքը, որ միտքը դրած էր Կ. Պոլսոյ պատրիարք ձեռնադրել իր աշակերտը, Իսիդորոս քահանան: Ուստի երբ Յովհան Պոլիս հասաւ, Թէոփիլոս սկսաւ անոր ձեռնադրութիւնը խափանելու աշխատիլ: Եւ այսպէսով եպիսկոպոսներուն, աւագանիին և ժողովրդեան միջեւ երկպառակութիւն մը ինկաւ: Եւտրոպիոս Ներքինապետը, որ կայսեր սենեկապետ ալ էր, այս բանս տեսնելով կանչեց Թէոփիլոսը և անոր ըսաւ. Աս երկուքէն մէկը ընտրէ՛. կամ միւս եպիսկոպոսներուն հետ միաբանէ՛ և ձեռնադրէ՛ Յովհան քահանան, և կամ պատրաստ եղիր պատասխան տալու եպիսկոպոսաց ժողովին մէջ այն ամբաստանութեանց որ քու մասիդ եղած են նոր նամակներով: Թէոփիլոս աս որ լսեց վախցաւ և ժողովին հետ ձեռնադրեց Յովհանը 398 Փետր. 26ին:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ'' ԳՐՔԷՆ

Գիրք Ա.—Գլ. ԺԶ.— Ի Ուրիշներու պակասութեանց համբերելու վրայ:

Ինչ որ մարդ իրեն կամ ուրիշներուն վրայ չի կրնար ուղղել, պէտք է համբերութեամբ տանիլ, մինչեւ որ Աստուած այլազգ տնօրինէ:

Մտածէ՛ որ թերեւս այսպէս լաւագոյն է, որպէս զի փորձուիս ու համբերութեան վարժուիս, առանց որոնց մեծ արժէք մը չունին մեր արդիւնքները:

Սակայն պէտք է որ այսպիսի արգելքներու համար պաղատիս Աստուծոյ. որպէս զի Աստուած հաճի քեզի օգնել, եւ կարող ըլլաս յօժարութեամբ համբերել:

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԱՆՈՒԱԿԱՒՈՐ ՉՄՈՒՇԿ

Ձմշկուլը լոկ մի քանի ցուրտ երկիրներու յատուկ զուարճալի ժամանց մը չէ, այլ աւելի օգտակար բաներու կը ծառայէ: Ձմեռ ատեն Հոլանտայի գեղջկուհիները իրենց ագարակին բերքերը շուկայ կը տանին ջրանցքներու սառին վրայէն չմուշկով արագօրէն սահելով: Անուակաւոր չմուշկը դեռ այգօրինակ գործնական կիրառութիւն մը չունէր. որովհետեւ մեծ ճամբաները անոր չեն ընծայեր այն դիւրութիւնները զոր բիւրեղացած ջրանցքները կ'ընծայեն սառի-չմուշկին: Միացեալ Նահանգաց բնակիչներուն պահուած էր անոր օգտագործումը: Հիմայ հոն մեծ հաստատութիւններու, մթերանոցներու մէջ պաշտօնեաները անուակաւոր չմուշկ կը հագնին, և անով արագ արագ կը սահին, կ'երթան կուգան, յաճախորդներու պէտք եղած բաները կը բերեն կը տանին: Այս նորակերտ չմուշկներով ոչ միայն դիւր տեղերը արագասահ կ'ընթացուի, այլ կարելի է ելլել նոյն իսկ բարձր տեղերը, ուր ապրանքները կը գտնուին:

ՀԻԱՆԱԼԻ ԴԱՐՁ

Ազատ-որմնադրականի մը

Կիւյապայի Ս. Ֆրանչիսկոսի Երրորդ-Կարգին վանատան Մեծաւորը, Բէռ. Էթիէն Մօրան հետեւեալը կը գրէ Պրէզիլէն:

«Աստուած մեր Առաքելութեան մեծ մխիթարութիւն մը պարգեւեց տեղացի հարուստ մասոնի մը անակնկալ և ստուգիւ հրաշալի դարձով որ առիթ եղաւ նաեւ ուրիշ շատ դարձերու:

«Այս պարոնը, շատ ծանր և յուսակտուր հիւանդութենէ մը բռնուած էր և աղանդին հետեւողներէն կը պահպանուէր, որպէս զի չըլլայ թէ քահանայ մը կարենայ քովը մօտենալ:

Քահանայ մը, ըստ սովորութեան երեք անգամ ներկայացաւ, բայց մերժուեցաւ պահապաններէն, որոնք, հիւանդէն ծածուկ, անոր եղբօրը և կնոջը հետ համաձայնած էին: Խեղճ օրհասականին վիճակը տակաւ կը ծանրանար: Ամբողջ 24 ժամ տեսակ մը զգայազիրկ կացութեան մէջ մնաց: Ինչ զարհուրանքի, ապշութեան մատնուեցան իրենները, երբ այն՝ որ մեռած կը համարուէր, յանկարծ ելաւ չոքեցաւ իր մահճին մէջ, բազուկները տարածեց, բռունցքներով ներկաներուն սպառնալով գոչեց իր բոլոր զօրութեամբ.

«Եղկելի՛...: Այո՛, ստուգիւ դժոխք մը կայ...:

«Եւ ես հոն գլորուելու վրայ էի, երբ «Սպիտակ Տիկին մը կասեցուց զիս անոր եզերքին վրայ, որպէս զի ժամանակ ունե-

«նամ խոստովանելու և անկէ ազատուելու։ «Դժոխքի գոյութիւնը ձեզի ցոյց տալու հա- «մար ... իմացէ՛ք որ այս ... այն ... և այն միւսը ... (վերջերս առանց խոստովանանքի «մեռած երեք աղանդաւորներ) դժոխք նետ- «ուած են ընդ միշտ ... Ապա դառնալով իր «եղբօրը և կնոջը՝ ըսաւ. Թշուառականնե՛ր, «դուք երկուքնիդ երեք անգամ մերժեցիք «քահանան, որ ինձի այցելութեան եկաւ՝ «զիս դժոխքէն փրկելու և արքայութեան «արժանի ընելու համար։ Դուն, եղբա՛յր իմ, «լա՛ւ գիտցիր որ այս տանը մէջ տէր չես ... «Թո՛ղ կինս երթայ շուտով քահանայ մը «կանչէ։ Քահանայ կ'ուզեմ խոստովանանք «ըլլալու համար։»

ԲԱՆԱՄԱՅԻ ՋՐԱՆՑՔԸ

Հոկտեմբեր 10ին Միացեալ Նահանգաց նախագահը, Վիլսոն, ելեքտրական կոճակի մը դպչելով Խաղաղականի եւ Ատլանդեանի միջեւ եղած վերջին թումբը օդը հանեց եւ բացաւ Բանամայի Ջրանցքը։

Բանամայի այս հսկայական ձեռնարկին սկիզբ տրուած է 1880ին՝ առաջարկութեամբ Ֆրանսայի մեծանուն Ֆէրտինան տը Լէսէփսի, որ Սուէզի Ջրանցքը պեղած էր Ափրիկէի աւազներուն մէջ։

Բանամայի Ջրանցքը 80 քիլոմէթր երկայն է, լայնութիւնն է առնուազարակ 300 մէտր, իսկ ամենանեղ տեղերը (Բուլէպրա) 91 մէտր, նուազագոյն խորութիւնն է 14 մէտր. պիտի ունենայ վեց կրկնակ սահնադռներ։ Ասոնցմէ իւրաքանչիւրին երկայնութիւնը պիտի ըլլայ 305 մէտր, և լայնութիւնը՝ 33 մէտր, որպէս զի կարելի ըլլայ անցք տալ մեծ նաւերու։ Ջրանցքը կը սկսի Ատլանտեան Ովկիանոսի Լիմոն խորշէն, կը հասնի մինչեւ Կատուն, որ 12 քիլոմէտր հեռու է։ Հոն կ'անցնի երեք սահնադռներէ որոնք ջուն կը հասնեն մինչեւ Կատունի լճին մակերեւոյթին բարձրութեան որ ովկիանոսէն 26 մէտր վեր է։ Ապա կը հանդիպի Կատունի լճին, որ արհեստական աւազան մըն է՝ 38 քիլոմէտր երկայն, յետոյ կը մտնէ Բուլէպրայի խրամին մէջ։ Բէտրօ-Միկէլի մօտ սահնադուռ մը ջուն կ'իջեցնէ 16 մէտր բարձրութեամբ լճակի մը մէջ, որ ջուն կը տանի մինչեւ Միրաֆլոռ, ուր երկու սահնադռներ կ'իջեցնեն ջուն և կը հաւասարեցնեն Խաղաղականի որ անկէ 13 քիլոմէտր հեռու է։

Արագընթաց նաւերը Ջրանցքը պիտի կարենան կտրել 12 ժամուան մէջ. իւրաքանչիւր սահնադրան անցքը կը տեւէ կէս ժամ։

Նաւերը Բանամայի Ջրանցքէն պիտի անցնին զօրութեամբ յատուկ եղեքտրական վայրաշարժներու որոնցմէ ամէն սահնադռներուն մօտ չորս հատ պիտի գտնուի։

Կատունի Ջրարգել փակոցը ամենամեծ Ջանքեր պարտադրած է։ Կատունի հովիտը՝ ծովէն՝ 26 մէտր բարձր մակերեւոյթով լճի մը վերածելու համար, հարկ եղած է չինել վիթխարի թումբ մը, որ այս արհեստական լիճին 16,576 հարիւրակալ (hectare) մակերեւոյթով Ջրի զանգուածը պիտի բռնէ։ Կատունի թումբը 26 մէտր բարձր է, երկայնութիւնն է 2413 մէտր, թանձրութիւնը, վարը՝ 805 մէտր, Ջրին երեսին մօտ՝ 120 մէտր, վերի ծայրը՝ 30մէտր։

Հանուած նիւթերը 200 միլիոն խորանարդ մէտր կը համարուին. իսկ չինութեան համար գործածուած խճճոնը (béton)՝ 4,500,000 տոկառաչափ, իսկ մինչեւ հիմայ եղած ծախքը՝ երկու միլիար եւ կէս ֆրանքէն աւելի։

1915 Յունուար 1ին պիտի բացուէր Բանամայի Ջրանցքը միջազգային նաւերու առջեւ։ Բայց կարելի է որ բացման թուականը քիչ մը կանխէ, եւ գալ ամառ նաւերը փոխանակ Մակելլանի նեղուցէն անցնելու, կարեն անցնին այս նոր ճամբան, որ արդիւնք է ֆրանսական եւ ամերիկեան յանդուգն ձեռներէցութեան։

Պողոս Քահանայապետ Ե.ի առ Զաքարիա Պատրիարք գրած նամակներուն բնագիրը

Բ. Նամակ
առ Քահանայապետական Փոխանորդն Կոստանդնուպոլսոյ

(Հայերէն թարգմանութիւնը տե՛ս Կ. Ուռնազանց թիւ 110, էջ 511):

Archiv. Vat. Paulus P. P. V. Anno IX
Tom. 45 Epist. 125

Dilecto filio Vicario Patriarchali Constantinopolis

PAULUS PAPA V

Dilecte fili salutem et Apostolicam Benedictionem

Addet tibi has nostras litteras dilectus filius Zacharia Vartabet Armenus, quem multis de causis valde in Domino diligimus. Is significavit nobis præfectum nuper fuisse unanimi consensu Episcoporum, et sacerdotum ac populi suæ nationis Ecclesiæ, quam istic habent. Quia vero magnam utilitatem expectamus ac Dei gloriam ex ejus pietate, ac prudentia in hac administratione ecclesiastica, cupimus ei favere in omnibus, quæ cum Domino possumus. Mandamus itaque tibi officia quæcumque poteris illi sedulo et amanter præstes, ut vinculum charitatis quo conjunctos huic Sanctæ Sedi Armenos retinere desideramus, opera hujus noslri dilecti filii ut confidimus, arctius validiusque reddatur et Nos permanenter tibi benedicimus.— Dat. ut supra.

ԳԱԼԹՈՂԻԿ ՄԷԶՀԷՊԻ ԷՍԱՍԼԱՐ (*)

(Տեվամի)

Պաղը տէգիա «Ալլահ նիչին ֆեճալարը զահիր էյլեմէյոր» ատէնիլիր։— Ալլահ էպէտի օլտուղը վէ կիւնահքեարքն թէվպէյէ կէյմէսինէ վագրթ վէրմէք իսթէտիյի իչին սապրրը տրր.— Եօղսա կիւնահքն ճէվապնը վէ ֆաղիլէթին տէ միւքեաֆաթնը հէյման պուրատա վէրմիշ օլսա, օ վագրթ ինսան սրրի մէնֆաաթթէրէսթիլիք սայիկասըյլա խայրա բաղպէթ իտէրսի— նիհայէթ, պիզ Ալլահքն բլանընը էյի թանընյամատրղրմրզտան, հէր հալտէ օնուն պու սուբէթլէ հարաքէթ իթմէյէ հագգը վէ աղրը սէպէպլէրի վար օլտուղնա գանի օլմալրյրզ։

— Թագտիրի իլանիյէ գարշը նէ՞ վազիֆէ իլէ միւֆէղղէֆիզ:

— 1. Հէր չէյտէ օնուն իտարէ ու հարաքէթինէ սէրֆիւրու իտուպ սէճտա էյլէմէք.

2. Օնուն պիզէ իհսան էյլէտիյի էյիլիքլէրէ մինէթտար օլմագ վէ սէլամէթիմիզ խուսուսընտա օնլարտան իսթիֆատէ էյլէմէք.

3. Օնուն պիզէ եօղատրղը զահմէթլէրին էյի պիր Բէտէր Թարաֆընտան կէլտիյի իչին, հագգըմըզտա խայրրը օլաճաղընա գանի օլարագ օնլարը մէսէրրէթլէ, եախօտ հիչ տէյիլսէ սապր իլէ գապուլ իթմէք.

4. Բէնտիմիզի քէմալը էնիյէթ ու թէսլիմիյէթլէ օնուն իտարէսինէ թէվտի էյլէմէք վէ ապիզլէրին «Հեր բես ճեր շեյի բեճեի բեճեիճեճ պեբյեռճեսիճեճ ճարաբեք իբմեյի վե չալբշմալը, վե բեճեի եյիճեճ կելեճի եաբտրգտաճ սօճրա, բեճեի մեսաիսիճեճ ճիչ պիր շեյ ինիբիզար Եյլեմեյիպ, ճեր շեյի Ալլահճաճ պեբյեմելի տիր» եօլընտաքի մէպտասընը թաթպիգ իթմէք վաղիֆէլէրիյլէ միւքէյլէֆիզ։

— Իբիրազ: Պեն Ալլահա նէ եաբմըշըմ ֆի պանա պու գասար տերս ու մինինեք վերիյոր:

— Սէնին, բուհանիյէ գայտուղ օլան կէօղլէրինին կէօրմէք իսթէմէտիյի քիւլլիյէթլի կիւնահլարընը վէ պու կիւնահլարըն միւսթէհազգ օլտուգլարը ճէհէննէմին էպէտի տէրտ ու մինէթլէրինի կէօզիւն էօնիւնէ գոյարագ Ալլահ սէնի հէր վագրթ մահճուպ իսէպիլիրսի։ Օ կիւնահլարըն քէֆարէթի իչուն չէքէճէյին քաւարան ազապլարընը կէօսթէրէրէք Ալլահ սանա ճէվապ վէրէպիլիրսի, ֆագաթ սէն Ալլահա նէ եաբմըշ օլտուղնը մը պիլմէք իսթէրսէն։ — Սճէպա օ գասար գահ-

(*) Տես թիւ 149, էջ 704։

մէթլէր, էզիյէթլէր չէքմիշ օլան մարտիրոսլար, ազիզէր Սլլահա նէ ֆէնալըգ եաբմըշլարտը։ Ինլարըն զահմէթլէրի կիւնահքեարլար իչին օլտուղը կիպի, ինլար իչին պիր ճեզա օլմայուպ պիր քեճրիպէ իտի, վէ իշթէ պու թէճրիպէլէրատէն մուզաֆիֆէրիյէթլէ չըգարգլարը իչուն տըր քի պիր էպէտի իհթիշամլա սէմատէ միւշէրրէֆ օլմուշ տըրլար։

Տէրտ ու մինէթի իհտաս էյլէյէն Սլլահ տէյիլ տիր, չիւնքի ինլար տիւնեայա կիւնահ տօլայըսըյլա կիրմիշտիրլէր. պինաէն ալէյհ, կէրէք պու տիւնեատա վէ կէրէք ախրէթտէ չէքիլէն զահմէթլէրին եէկեանէ սէպէպի սըրֆ կիւնահ տըր։ Ֆագաթ Սլլահ ֆէնալըգաան տա էյիլիք չըգարապիլիր. չէօյլէ քի կիւնահլէրիմիզ սէպէպիյլէ չէքտիյիմիզ զահմէթլէր սէլամէթիմիզէ իատիմ օլուրլար։ Խիւլասէ, չէքտիյիմիզ մինէթ ու մէշադարթլար թէվպէյէ կէլմէքլիյիմիզէ, կիւնահլարըմըզըն ափլըզընա մազհար օլմագլըզըմըզա վէ էճր ու սէվապ դազանմագլըզըմըզա իատըմ իտէրլէր։

Հիբեայէ։ Պիր կիւն Պօրտօ արքեպիսկոպոսը գարինայ Շըվէրիւսպ դայէթ զէնկին պիր ատամըն չօճուղընը վաֆթիզ էյլէտիյի սըրատտա կէօրտիւ քի, էթրաֆըն ֆագիր ագրըպլարը պուլունան պիր գարըճըզազ տա գուճաղընտաքի չօճուղըն վաֆթիզ իտիրմէսինի արզու էյլէյօրտը։ Գարտինայ պունլարա խիթապէն «Շու վիգըյմէթ էլպիսէլէրլէ սարըլմըշ օլան չօճուղը վաֆթիզ էյլէտիյիմ կիպի, սիզին գունտագտան մահրում օլան չօճուղունըզը տա վաֆթիզ իտերիմ» տէր։

Մկրտութիւն պիթտիքտէն սոնրա, Գարտինալ օրտտա հազըր պուլունան զէնկինլէրէ վէ ֆագիրլէրէ ֆայիտէլի պիր տէրս վէրմէք իչին ինլարա տէր.

«Շու չօճուգլարը հէր իքիսի տէ ինտուլլահ միւսավի սուրէթտէ պէօյիւք վէ զէնկին տիրլէր։ Հէր իքիսի տէ ամի սատէթի էպէտիյէ թախսիս օչընըշըրլար. ֆագաթ ֆարգը թարիգէրլէ օրտայա վարլ օլաճագ տըրլար։ զէնկին, գարտաշլարընը թէսրիր վէ թէսէլլի իտէն qarsաc մուհապէթիյլէ։ ֆագիր իսէ միւթեվապի վէ էմէքլի պիր հայաթ իլէ, Սէմա՝ qահմէք չէրէնէ, սապրըլը օլտուղը իչին, քէարիր վէ քէսէլլի իտէնէ տէ բրգդաթլը, մերհամէթլի օլտուղը իչին ալչըլաճագ տըր։ Պիրինին ֆագիլէթի, ֆէտաքեար վէ ճէօմէրտ մուհապէթի, տիկէրինին ֆագիլէթի տէ սապրը վէ միննէթտարլըղը օլաճագ տըր։ Հէր իքիսի տէ պու կիւնտէն մէսլէքլէրինի պաշլամալը տըրլար։ Ֆագիր չօճուգ թալէպ իթմէքտէն ոճիզ օլտուղընտան, իշթէ պէն ծա թէրճէմանլըգ վագիֆէսինի իյֆա իտիյօրըմ։ Զէնկին չօճուգ տա քէնտիլիյինտէն վէրմէյէ ոճիզ օլտուղընտան, քէնտի թարաֆքնտան սիզ օ վագիֆէ իլէ միւքէլլէֆսինիզ։»

Պունըն իւզերինէ Գարտինայ օրտտա հազըր պուլունան զէնկինլէրտէն ֆագիր չօճուգ իչին իտնէ թօրլամայա պաշլատը վէ պէօյիւք պիր մէպլաղ ճէմինէ միւյէսսէր օլարագ ֆագիր չօճուզրն էպէվէյինինէ թէպիմ իթտի։ Պունլար իսէ թագտիրի իլահիյէ տուա իտերէք, մէսերրէթլէրինտէն մինէթտարլըգ կէօղ եաղլարը տէօքիյօրլարտը։

(Մարպտի վար)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Նոյեմբեր 5ին Հռոմի մէջ, Լեւոն ԺԳ. Քահանայապետին հոգւոյն համար մատուցուեցաւ հանդիսաւոր պատարագ և կատարուեցան այն արարողութիւնները, որ, Կոստանդինեան յարեկեանին առթիւ, Յուլիս 20էն Նոյեմբեր 5ին ձգուած էին։

Պատարագիչն էր Վ. սեմաշուք Վանուդելլի Կարդինալը։

Ս. Քահանայապետը, որ ներկայ կը գտնուէր, գահի վրայ բազմած էր, թագը ապիտակ էր, իսկ շուրջառը՝ կարմիր, որ քահանապետներու համար սուգի գոյն է։

Պատարագէն յետոյ Ն. Սրբութիւնը արձակման աղօթքը արտասանեց հզօր և վճիռ ձայնով։ Ներկայ կարդինալներուն մէջ էին Վսեմ. Ռամբոլա, Նանարդ պետական պաշտօնեայ, Գասանիս տէ Ասթէվէտս և Վալբէ, որոնք Լեւոն ԺԳ.ի օրով պետական պաշտօնեաներ էին։

Դեսպանները, իրենց յատուկ սթոռներուն վրայ բազմած՝ կը հետեւէին արարողութեան։

Բազմաթիւ բարձրաստիճան անձեր իրենց վերապահեալ տեղերը գրաւած էին։

Սիքստեան մատուռին դպրաց դասը երգեց Բերոյիի պատարագը. Or բարկուբեանը (Dies iræ) խոր տպաւորութիւն մը ձգեց ամէնուն վրայ։

Հռոմ Ս. Քահանայապետին այցելութեան եկած բոլոր գերման եպիսկոպոսները ներկայ գտնուեցան արարողութեան, ուր կային ընդամենը 21 Կարդինալ, 30 Արքեպիսկոպոս և Եպիսկոպոս։

⁂ Նոյեմբեր 8ին Ս. Քահանայապետը առանձին ունկնդրութեան ընդունեցաւ տոն Ֆիրմինո Գալպէգոն Պանչոն, անգամ Սպանիոյ Մերակոյսին։ Ն. Վ. Տէրութիւնը Ս. Քահանայապետին մատոյց այն վաւերաթղթերը որոնցմով վերջ կը տրուէր իր Սպանիոյ արտակարգ դեսպանի և լիազօր պաշտօնէի հանդամանքին։

Ս. Հայրը հաճեցաւ քիչ մը ատեն խօսակցիլ Դեսպանին հետ. յետոյ ընդունուեցաւ Տիկին Գուլպըդեան, որուն հետ եւս Ն. Սրբութիւնը հայրաբար խօսեցաւ։

Քահանայապետական ունկնդրութենէն յետոյ, Դեսպանը և Դեսպանուհին, ըստ սովորութեան այցելութիւն տուին Վսեմ. Կարդինալ Մէրի տէլ Վալի։

Սպանիոյ Թագաւորին դեսպանը ընդունուեցաւ և յուղարկուեցաւ իր աստիճանին վայել պատիւներով։

Իրեն տեղը պիտի գրաւէ ուրիշ դեսպան մը՝ ընտրուած նոր Պաշտպանողական Դահլիճէն։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Զմմառեան արդիւնաշատ Միաբանութեան կանոնագիրը, որ Ս. Գահին կողմէ պաշտօնապէս հաստատուած էր, տպագրուեցաւ Նոյեմբեր 13ին եւ արդի Միաբանից ցանկին հետ մասնաւոր շրջաբերականով ղրկուեցաւ ամէն Միաբաններու։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Թուրքեւ-Հելլէն հաշտութեան դաշնագիրը, որ վերջնականօրէն ստորագրուեցաւ Աթէնքի մէջ, երկու տէրութեանց միջեւ առկախ մնացած կարգ մը խնդիրներու լուծումը կը թողու Լահէի Հաշտարար ատեանին։

Այս դաշնագրին կնքման մեծապէս նպաստեց Ռումանիոյ ներքին գործոց նախարար Մ. Թաքէ Եօնէսքօ, որ վերջերս Աթէնք այցելեց և անկէ եկաւ Պոլիս, ուր մի քանի օր մնալէ ետքը դարձաւ իր տեղը։

∴ Ներքին գործոց Նախարարութիւնը հեռագրեց գաւառային իշխանութիւններուն որ պատերազմի ատեն արտաքսուած Հելլէններուն Պոլիս վերադարձը արգիլեն։

∴ Յունաստան գտնուող օսմ. գերիներուն առաջին խումբը Պիրէոսէն Պոլիս բերուեցաւ։ Գերիները տարուեցան Սէլիմիէի զօրանոցը։

∴ Յունաստան գտնուող օսմ. գերիները, որոնց թիւը 40.000ի կը հասնի, իրենց ծննդավայրը փոխադրելու համար պայմանագրութիւններ կնքուեցան Խըտիվիէի և ռումանական ընկերութեանց հետ։ Նաև Սէյրը Սէֆայինի վարչութիւնը հինգ շոգենաւ յատկացուց։ Կը կարծուի թէ գերիներուն փոխադրումը կարճ ժամանակի մէջ պիտի աւարտի, ձեռք առնուած միջոցներուն շնորհիւ։

∴ Թուրքեւպուլկար սահմանները գծող երկու յանձնաժողովներէն մին Պայրամէն առաջ իր աշխատութիւնները աւարտեց։ Միւս յանձնաժողովը Պայրամի օրերն ալ աշխատեցաւ և յոյս կայ որ մօտ ատենէն պիտի աւարտէ իր գործը։

∴ Նախկին Եպարքոս Քեամիլ փաշա մեռած է։

∴ Նոյեմբեր 4ին սկսան Թուրքեւսերպ բանակցութիւնները՝ երկու երկիրներու միջեւ հաշտութիւն կնքելու համար։ Կը հաւատացուի թէ այս բանակցութիւնները երկար պիտի չտեւեն և կարելի պիտի ըլլայ շուտով համաձայնութիւն գոյացնել և հաշտութեան դաշնագիրը ստորագրել։

∴ Հելլէն կառավարութիւնը Պոլսոյ դեսպան նշանակած է արտաքին գործոց նախարար Մ. Բօնասը. որուն անուանման մասին Բ. Դրան հաւանութիւնը պիտի խնդրուի։ Օսմ. կառավարութիւնը տակաւին պաշտօնապէս նշանակած չէ Աթէնքի իր Ներկայացուցիչը. բայց կէս-պաշտօնական շրջանակներու մէջ կ'ըսուի թէ Կալիպ Քէմալի պէյ հաւանական ընտրելին է։

∴ Բարիզ, Նոյ. 18.— Մ. Բօքօվցէվ Հայաստանի բարենորոգմանց մասին Վէչէրնա Վրէմիայի մէկ թղթակցին յայտարարեց թէ Ֆրանսա և Ռուսիա համաձայնած են բարենորոգումները գործադրել տալու բոլոր տէրութեանց հակակշռին տակ և ո՛չ թէ միայն Ֆրանսայի և Ռուսիոյ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ 737
Գարտինալ Հասուն 739
Երանելի Տէր Կոմիտաս Նահատակին պատմական երկու գրութիւնները . . . 741
Եսքեր 743
Լիոնի Կաթողիկէ Իրաւագէտներու համաժողովը . . . 466
Եօթնեակ Քրիստոնէի 747
Այլեւայլք 748
Նամակ առ Զաքարիա Պ. 750
Գաթօլիք Մէզհէպի Էսասլարը 740
Տեղեկագրական 751

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաքաքաբերի, Բերա. Պալրամ մառող թիւ 5, Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով։

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները։

Գին 5 դահեկան, էջ 144 առուր թղթակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գնողներու, գոհացուցիչ զեղչ։

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարբական Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ։ Բաղկացած է 136 էջերէ։ Գին, ամուր թղթակազմը 2 դհկն.։

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Société Anonyme au Capital entièrement versé de K. 130.000.000

Réserve: K. 37.300.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Herrengasse 8.
avec 12 Agences dans les principaux quartiers de la ville.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE: Place de Karakeuy, Galata
BUREAU DE STAMBOUL; Elkiatib Han
BUREAU DE PÉRA: St. Antoine Han

Succursales et Agences à:

Aussig a/E	*Carlsbad*	*Marienbad*	*Teplitz*
Bielitz-Biala	*Friedek-Mistek*	*Pilsen*	*Tetschen*
Brünn	*Graz*	*Prag*	*Villach*
Budapest	*Klagenfur*	*Prossnitz*	*Wr. Neustadl*
Czernowitz	*Lemberg*	*St. Poelten*	

La Succursale de Galata, l'Agence de Stamboul et celle de Péra s'occupent de toutes opérations de banque, telles que:
Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets.
Avances sur Marchandises.
Achat et vente de change sur l'Etranger.
Escompte d'effets.
Emission de traites, chèques, lettres de crédit.
Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.
Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.
Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.
Ouverture de Comptes-Courants, d'accréditifs simples et documentaires.
Exécution d'ordres de Bourse, garde de valeurs publiques etc. etc.
La Succarsale du **Wiener Bank-Verein** à Calata et ses Agences à Stamboul et Péra ont institué pour faciliter à la petite épargne le placement de ses économies un service de Caisse d'Epargne aux clauses principales suivantes:
Les versements doivent être effectués en Piastres or; il n'est point accepté de versement inférieur à Pst. 50.—
Le Wiener Bank-Verein servira au déposant un intérêt fixé aujourd'hui à $3^1/_2$ % p. a. pour toute somme jusqu'à concurrence de Ltq. 1000— et 3 % seulement pour l'excédent dépassant ce chiffre.